ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

# Ժողովուրդ

27 ապրիլի հինգշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

61
(2727)

100 դրամ

Ք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

## ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼՆԵՐԸ՝ ՀԻՆ «ՎԻԼԻՍ»-ՆԵՐՈՎ

Դեռեւս մեկ ամիս առաջ՝ ՀՀ ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի արտահերթ նիստի ժամանակ, ՀՀ արդարադատության նախարար Գրիգոր Մինասյանը հայտարարել էր. «Դատապարտյալների ապահով եւ անվտանգ տեղափոխման համար 10 նոր «Ֆորդ տրանզիտ» մեքենա ենք ձեռք բերել, նախկին՝ ահավոր վիճակում գտնվող «Ուազիկները» վերացրել ենք, փոխարինել ենք նորմալ, կոնդիցիոներով մեքենաներով»: Նախարարի այս հայտարարությունից անցել է մեկ ամիս, սակայն դատապարտյալների կյանքում ոչինչ չի փոխվել:

Ապրիլի 25-ին «Ժողովուրդ» օրաթերթը Հակակոռուպցիոն դատարանում արձանագրեց, որ ՊՆ նախկին նախարար Դավիթ Տոնոյանի եւ մյուս պաշտոնատար անձանց գործով դատական նիստի օրը «Վիլիս» մակնիշի 4-տեղանոց ավտոմեքենայի մեջ 5 նախկին պաշտոնյաներին մի կերպ խցկել էին ու ԱԱԾ մեկուսարանից բերել դատարան:

«Վիլիսի» մեջ էին ՊՆ նախկին նախարար Դավիթ Տոնոյանը, Զու գլխավոր շտաբի պետի նախկին տեղակալ Ստեփան Գալստյանը, ՊՆ նախկին պաշտոնյա Ավետիք Մուրադյանը, գործարար Դավիթ Գալստյանը եւ ՊԲ նախկին հրամանատար Միքայել Արզումանյանը:

Ավտոմեքենայի հետ կապված խնդրով պայմանավորված՝ անգամ դատական նիստը մեկ ժամով վերոնշյալ պաշտոնյաների մասով հետաձգվել է: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ այդ օրը նախկին պաշտոնյաներին տեղափոխող «Վիլիս»-ը փչացել էր:

Այս խնդրի առնչությամբ մեկնաբանության համար դիմեցինք ՀՀ արդարադատության նախարարություն՝ հասկանալու համար, թե ինչ եղան նախարարի խոստացած «Ֆորդ տրանզիտ»՝ կոնդիցիոներով ավտոմեքենաները: Ի պատասխան մեր հարցմանը՝ ՀՀ արդարադատության նախարարությունից հայտնեցին՝ առաջիկայում ազատազրկված անձանց դատական նիստերի կամ հիվանդանոցներ տեղափոխելու գործառույթը կտրվի Քրեակատարողական ծառայությանը: Հավելենք, որ ներկայումս ծառայությունն իրականացնում է ոստիկանությունը իր ավտոմեքենաներով: Առաջիկայում մրցույթ կհայտարարվի, կկազմակերպվի վերապատրաստման պրոցես, որից հետո ՔԿ ծառայությունը ամբողջությամբ կիրականացնի դատապարտյալներին եւ կալանավորներին դատական նիստերի կամ հիվանդանոց տեղափոխելու գործընթացը: Ասել է թե՝նախարարի խոստացած կոնդիցիոներներով մեքենաները դեռ կանգնած են, վերապատրաստված վարորդներ չկան, իսկ կալանավորները դեռ կմնան ճանապարհներին:

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը հունիսին քաղաքական երկրորդ ժողովը կանցկացնի Դիլիջանում: Նիստը վարելու է Նիկոլ Փաշինյանը: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ կուսակցության քաղաքական ժողովին մասնակցելու են կառավարության անդամները՝ նախարարներ, փոխվարչապետներ, ԱԺ նախագահը, նրա տեղակալները, հանձնաժողովի նախագահները, տարածքային կազմակերպությունների ղեկավարներ եւ համայնքի ղեկավարներ, ինչպես նաեւ հրավիրյալ անձինք, որոնց կորոշի վարչությունը: Կուսակցության քաղաքական ժողովներին քննարկվում են արտաքին եւ ներքին քաղաքականությանը, կուսակցության զարգացման ռազմավարությանն առնչվող, ինչպես նաեւ կազմակերպչական բնույթի հարցեր: Ի դեպ, սա կուսակցության երկրորդ քաղաքական ժողովն է. կուսակցության քաղաքական առաջին ժողովը տեղի էր ունեցել Ջերմուկում դեկտեմբերի 17-ին: Թե ինչու է որպես ժողովի վայր ընտրվել Դիլիջանը, երբ Փաշինյանը Տավուշից է, մեզ հետ զրույցում պատգամավոր Գեւորգ Պապոյանը պատասխանեց. «Որոշումը հետեւյալն է՝նիստերն անել մարզերում. տարբեր տարբերակներ ենք քննարկել, այդ թվում՝ Արարատի ու Արմավիրի մարզի տարբերակն էլ ենք քննարկել, հատուկ որոշում չկա այս մասով: Խնդիրն այն է, որ հենց մարզերում անենք»:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝հունիսի 12-ին Արցախի գերագույն դատարանը նախագահ Արայիկ Հարությունյանի նախաձեռնած Սահմանադրական բարեփոխումների նախագծի հարցով վերջնական որոշում է կայացնելու: Դատարանն այդ օրը նիստ կանի, որպեսզի որոշի՝արդյոք այն համապատասխանում է Արցախի Սահմանադրությանը, թե ոչ: Ստացվում է՝դեռ մեկ ամսից ավելի Արցախի Սահմանադրության մեջ փոփոխություններ չեն լինի: Նշենք, որ նախագիծը ենթադրում էր հետեւյալը. ֆորսմաժորային իրավիճակներում հանրապետության նախագահի պաշտոնը թափուր մնալու դեպքում նախագահի ընտրության իրավունքը վերապահվում էր խորհրդարանին: Նախագիծն ԱԺ-ում առաջին ընթերցմամբ քննարկվելուց հետո ուղարկվել էր Գերագույն դատարան. հունիսի 12-ին դատարանը կորոշի՝որքանով է նախագիծը համատեղելի Արցախի Սահմանադրության հետ: Դրական եզրակացության դեպքում այն կրկին կուղարկվի ԱԺ՝արդեն երկրորդ ընթերցմամբ քննարկվելու, իսկ եթե դատարանը որոշի, որ նախագիծը Սահմանադրության հետ հակասություններ ունի, ապա այն կճանաչվի հակասահմանադրական: Սահմանադրական փոփոխությունների նախագիծը ԱԺ-ում կարող է ընդունվել պատգամավորների ընդհանուր թվի 2/3-ով (22 պատգամավոր):

ՀՀ կառավարությունը դեռ չի որոշել՝ինչպես է վարվելու Հռոմի ստատուտի հետ: Ինչպես հայտնի է, մարտի 24-ին ՀՀ Սահմանադրական դատարանը հայտարարեց, որ Միջազգային քրեական դատարանի հիմք հանդիսացող Հռոմի ստատուտը համապատասխանում է երկրի Սահմանադրությանը, եւ Հայաստանի կառավարությունը կարող է շարունակել համաձայնագրի վավերացման գործընթացը: Այս հանգամանքից հետո տարաբնույթ հայտարարություններ հնչեցին նաեւ այն մասին, թե այս քայլով Հայաստանը նաեւ դեմ է գնում ՌԴ-ին, եւ Արեւմուտքի պատվերով Վլադիմիր Պուտինը կձերբակալվի, հենց Երեւան մտնի: Եվ, ահա, ըստ ՀՀ Սահմանադրության 116-րդ հոդվածի՝Ազգային ժողովն է վավերացնում միջազգային պայմանագրերը, այսինքն՝առանց խորհրդարանի հաստատման Հռոմի ստատուտը չի կարող ուժի մեջ մտնել: ՍԴ որոշումից հետո Հայաստանի կառավարությունն ունի երեք ամիս ստատուտի վավերացման հարցը խորհրդարան ուղարկելու համար: «Ժողովուրդ» օրաթերթը դիմել էր ՀՀ կառավարությանը՝հասկանալու համար, թե երբ է այն ուղարկվելու խորհրդարան: Հետաքրքիր է, որ կառավարությունը մեկ ամիս ժամկետ է խնդրել մեր հարցին պատասխանելու համար: Ինչպես նշեցինք, կառավարությունը երեք ամիս ուներ որոշում կայացնելու համար. մեկ ամիսն անցել է: Մեր տեղեկություններով՝այս պահի դրությամբ իշխանությունները դեռեւս վերջնական որոշում չունեն կոնվենցիայի մասով, համենայնդեպս գործադիրը դեռ օրենսդիր մարմին չի ուղարկել ստատուտը:

ՆՈՐ ՌԻՍԿԵՐ

# ՓԱՇԻՆՅԱՆՆ ԱՌԻԹԱՎՈՐԵԼ Է ԲԱՔՎԻՆ

**«Ժողովուրդ» օրաթերթը Հայաստանում եւ Արցախում տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ զրուցել է քաղաքագետ, «Դեմոկրատական այլընտրանք» կուսակցության ղեկավար Մուրեն Սուրենյանցի հետ:**

**-Պարոն Սուրենյանց, ապրիլի 23-ին Ադրբեջանը փակել է Հայաստան-Արցախ այլընտրանքային ճանապարհին գտնվող Հակարիի կամուրջը՝ արդեն ամբողջական շրջափակելով Արցախը, այնտեղ նաեւ անցակետ է տեղադրել: Ինչպես կգնահատեք այս իրավիճակը, ի՞նչ ելքեր եք տեսնում:**

-Ես դեռեւս Լաչինի միջանցքի փակումից՝ դեկտեմբերի 12-ից հետո մի քանի անգամ ասել եմ, որ եթե մի օր միջանցքը վերաբացվի, ապա նույն ռեժիմով չի գործելու, քան մինչ դա էր: Ցավոք սրտի, կանխատեսումս իրականացավ. ակնհայտ էր, որ Ադրբեջանն իր վերահսկողությունը հաստատելու ինչ-որ մեխանիզմ գտնելու է, հիմա գտել է անցակետ տեղադրելու եղանակը: Ալիեւը զիջումների չի գնալու: Նախ՝ նա, որպես կանոն, անում է քայլեր, որոնք չեն արժանանալու միջազգային դերակատարների կոշտ արձագանքին. թե՛ Ռուսաստանը, թե՛ ԵՄ-ն ու ԱՄՆ-ն հանդես կգան ֆորմալ հայտարարություններով, բայց դրան չի հետեւելու ո՛չ Ռուսաստանի կոշտ հարկադրանքը, ո՛չ էլ Արեւմուտքի կողմից պատժամիջոցներ են լինելու: Այս ամենն Ալիեւը հստակ հաշվարկել է, մյուս կողմից էլ՝ նա օգտվում է այն նվերից, որը նրան տվել է Փաշինյանը:

Անցած տարվա ընթացքում Նիկոլ Փաշինյանը խոսում էր ԼՂ կարգավիճակի մասին, նշաձողի իջեցման մասին, հետո Պրահայում ստորագրեց մի հայտարարություն, որով ճանաչեց Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը, բայց դրա դիմաց չպահանջեց փաստաթղթավորված որեւէ երաշխիք:

**-Այսինքն՝ Նիկոլ Փաշինյա՞ն է հիմք տվել Ադրբեջանին նման սադրանքների համար:**

-Իր անատամ քաղաքականությամբ նպաստել է Ադրբեջանի մաքսիմալիզմին: միայն Ադրբեջանի ագրեսիվ կեցվածքն ու միջազգային հանրության անտարբերությունը չեն այս ամենի պատճառը, նաեւ մեր իշխանության վարած ոչ ադեկվատ քաղաքականությունն է, որ առիթավորում է Բաքվին եւ նրան մղում է խորը արմատական գործողությունների: Գլոբալ խնդիրն այն է, որ Բաքուն ունի օրակարգ, իսկ Երեւանը՝ ոչ:

**-Ըստ Ձեզ՝ ինչո՞վ է պայմանավորված միջազգային հանրության լռությունը, ինչո՞ւ, հայտարարություններից բացի, հստակ քայլեր չեն ձեռնարկվում:**

-Դա օբյեկտիվ իրականություն է՝ պայմանավորված երկու հիմնական հանգամանքով. միջազգային իրավունքն ու հարաբերությունները գտնվում են խորը ճգնաժամի մեջ, եւ որեւէ զսպող մեխանիզմ չի աշխատում, երկրորդ՝ 44-օրյա պատերազմից հետո եւ ռուս-ուկրաինական պատերազմի հետեւանքով չափազանց մեծացել է Ադրբեջանի լոգիստիկ նշանակությունը Արեւմուտքի եւ Ռուսաստանի համար: Չկա որեւէ կենտրոն, որ պատրաստ լինի Հայաստանի հետ դաշնակցել՝ ընդդեմ Ադրբեջանի ու Թուրքիայի:

**-Պարոն Սուրենյանց, շատերը այս իրավիճակից միակ ելք տեսնում են միայն իշխանության փոփոխությունը. կիսո՞ւմ եք այս տեսակետը:**

-Իշխանության փոփոխությունը, ճիշտ է, մասնակի ելք է, բայց գոնե ելք է այն իմաստով՝ դրանից հետո նոր սխալներ չեն արվի: Այս իշխանությունը օրակարգ չունեցող, անատամ մի իշխանություն է, որի ցանկացած գործողություն բերում է նոր ռիսկերի. ողջամիտ ու սոլիդ իշխանությունը այդ սխալները չի անի: Կարծում եմ՝ առաջին հերթին պետք է Մոսկվայի հետ հարաբերությունների հստակեցում, պետք է հասկանանք՝ ինչ քաղաքականություն է վարում ՌԴ-ն, որպեսզի, ըստ այդմ, կարողանանք նաեւ մեր քաղաքականությունը մշակել ու մեր շահերը փորձենք ադապտացնել այն իրողություններին, որոնք բխում են Մոսկվայի քաղաքականությունից: Պետք է պատասխանատվության խնդիրը բարձրացնել նաեւ Արեւմուտքի առաջ, բայց այս ամենի համար պետք է նորմալ իշխանություն, որը կունենա մեր ազգային շահերից բխող օրակարգ:

*Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ*

ԱԿԱՆԱՏԵՍԸ ՊԱՏՄՈՒՄ Է

# ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ՝ ՕՍԿԱՆՅԱՆԻ ՈՐԴՈՒ ԳՈՐԾՈՎ

**«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ՀՀ արտաքին գործերի նախկին նախարար Վարդան Օսկանյանի որդու՝ Արա Օսկանյանի դեմ հաղորդում ներկայացրած անձը մանրամասներ է հայտնել:**

Փավլիզ Նոսրաքին հայտնել է. «Շենգավիթ վարչական շրջանի Բագրատունյաց փողոցի 67 հասցեի անշարժ գույքը (բետոնի արտադրամաս) սեփականության իրավունքով պատկանում է «ԲԵՏՈՆ ՄԱՐԿԵՏ» ՍՊ ընկերությանը (ՀՎՀՀ՝02244508), իսկ նշված ընկերության 100 տոկոս բաժնեմասի սեփականատերը «ՕՅՈԱ» ՍՊ ընկերությունն է (ՀՎՀՀ՝ 00931586), որի 99 տոկոսի սեփականատերը եւ տնօրենը Արա Վարդանի Օսկանյանն է: Երբ կայքերից մեկը փորձում է վատաբանել որեւէ անձի, սեւացնել, արատավորել պատիվն ու արժանապատվությունը, արդար կլիներ, որ առաջին հերթին անդրադառնար նաեւ սիրելի Վարդան Օսկանյանի եւ նրա ընտանիքի անդամների ձեռք բերած գույքի ծագումնաբանությանը եւ դրսեւորած վարքագծին:

Ես ԻԻՀ քաղաքացի Փարվիզ Նոսրաթին եմ, հանդիսանում եմ Արա Վարդանի Օսկանյանի գործողություններից տուժած անձ, քանի որ հավատալով վերջինիս խոստումներին՝նրան վճարել եմ 8 մլն 400 հազար ՀՀ դրամ կանխավճար (8.200.000 դրամը՝փոխանցմամբ, 200.000 դրամը՝առձեռն), որպեսզի պայմանավորված արժեքով վաճառի Բագրատունյաց փողոցի 67 հասցեի անշարժ գույքը կամ «ԲԵՏՈՆ ՄԱՐԿԵՏ» ՍՊ ընկերության բաժնեմասը, սակայն պարզվել է, որ այդ գույքի վրա մեծ գումարի պարտավորության համար արգելանք է դրված, եւ ի սկզբանե Արա Վարդանի Օսկանյանի համար ակնհայտ է եղել, որ արգելանքի պատճառով չի կարող վաճառել այն: Երբ պարզվել է այդ ամենը, Արա Վարդանի Օսկանյանը սկսել է խոստումներ տալ, թե հետ կվերադարձնի գումարը, սակայն չի վերադարձրել: Ստիպված հանցագործության մասին հաղորդում եմ ներկայացրել, որով նախաձեռնվել է քրեական վարույթ:

Լավ կլիներ, որ իրենց կայքն անդրադառնար Արա Վարդանի Օսկանյանին, բացահայտեր նրա գործողություններից տուժածներին, պարզեր Բագրատունյաց փողոցի 67 հասցեի անշարժ գույքի ձեռք բերման ծագումնաբանությունը: Պետք է նշեմ, որ Արա Վարդանի Օսկանյանն ինձ հետ նման կերպ վարվելու հարցում օգտագործել է նաեւ իր հորը՝ՀՀ արտաքին գործերի նախկին նախարար Վարդան Օսկանյանին, որն ինձ հետ խոսել է հեռախոսով եւ իր որդուն գովաբանելով՝ ինձ մոտ վստահություն է ստեղծել, թե գործ ունեմ բարեխիղճ մարդու հետ, մինչդեռ Վարդան Օսկանյանը լավ գիտեր, թե ով է իր որդին եւ ինչ պատմությունների մեջ է»:

Հավելենք՝ «Ժողովուրդ» օրաթերթն ապրիլի 20-ին էր գրել, որ ՀՀ արտաքին գործերի նախկին նախարար Վարդան Օսկանյանի որդու՝ Արա Օսկանյանի գործողությունների մասով ՀՀ քննչական կոմիտեում քրեական գործ է հարուցված՝ խարդախության հատկանիշներով:

Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ Օսկանյանի որդին կալանքի տակ գտնվող գույքը վաճառել է, ինչի առթիվ իրավապահներին հաղորդում է ներկայացվել հանցագործության մասին, որտեղ էլ տրվել է Օսկանյանի որդու՝Արա Օսկանյանի անունը:

Իհարկե, առաջին դեպքը չէ, որ Վարդան Օսկանյանի որդին հայտնվում է իրավապահների տեսադաշտում: Հիշեցնենք՝ 2017 թ. փետրվարի 17-ին, Հայաստանի քննչական կոմիտեի Կոտայքի մարզային քննչական վարչության Կոտայքի քննչական բաժնի քննիչի որոշմամբ, ձերբակալվել էին 33-ամյա Արա Օսկանյանն ու 25-ամյա Հրանտ Սերադարյանը: Վերջիններս կասկածվում էին քաղաքացու պարտքը վերադարձնելու պահանջով առեւանգելու համար. ավելի ուշ գործը կարճվեց:

## ԱՄՆ-Ն ՈՒ ԵՎՐՈՊԱՆ ՄՏԱՀՈԳՎԱԾ ԵՆ




Միջազգային հանրության կողմից շարունակվում են Ադրբեջանին ուղղված կշտամբանքները, սակայն Լաչինի միջանցքը շարունակում է փակ մնալ, դրան էլ ավելացել է տեղադրված անցակետը:

ԱՄՆ պետքարտուղարության փոխխոսնակ Վեդանտ Պատելը ճեպազրույցի ժամանակ անդրադարձել է Արցախը Հայաստանին կապող ճանապարհին հսկիչ անցակետի ապօրինի տեղադրմանը: Նա կրկին հայտարարել է, թե Պետքարտուղարությունը խորապես մտահոգված է Լաչինի միջանցքում անցակետի ստեղծմամբ: Նրա խոսքով՝ Լաչինի միջանցքում պետք է լինի մարդկանց եւ բեռների ազատ եւ բաց տեղաշարժ:

Իր հերթին Եվրոպական խորհրդարանի՝ Հարավային Կովկասի հետ հարաբերությունների գծով պատվիրակության նախագահ Մարինա Կալյուրանդը, Հայաստանի եւ Ադրբեջանի հարցերով մշտական զեկուցողներ Անդրեյ Կովաչենչեւը եւ Ժելյանա Ջովկոն համատեղ հայտարարությամբ են հանդես եկել՝ «Լաչինի միջանցքի առնչությամբ Ադրբեջանի կողմից իր միջազգային պարտավորությունների նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքի մասին»: Նրանք եւս իրենց մտահոգությունն են հայտնել 2023 թվականի ապրիլի 23-ին Ադրբեջանի կողմից Լաչինի միջանցքում անցակետի տեղադրման կապակցությամբ:

Հայտարարության հեղինակները հիշեցնում են, որ Ադրբեջանի կողմից միջանցքի շրջափակումը շարունակվում է 2022 թվականի դեկտեմբերի 12-ից՝ հումանիտար դժվարություններ ստեղծելով Լեռնային Ղարաբաղի բնակչության համար եւ մեծապես խաթարելով խաղաղության հեռանկարները:

*ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ*

## ԼԱՉԻՆԻ ՄԻՋԱՆՑՔ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը երեկ հեռախոսազրույցներ է ունեցել Լաչինի միջանցքում անցակետ տեղադրելու՝ ադրբեջանական կողմի քայլի մասով:

Առավոտյան նա հեռախոսազրույց է ունեցել Եվրոպական խորհրդի նախագահ Շառլ Միշելի հետ, մտքեր փոխանակել տարածաշրջանում հաստատված ռազմաքաղաքական եւ հումանիտար իրադրության շուրջ:

Փաշինյանը նշել է, որ Լաչինի միջանցքում ադրբեջանական կողմի քայլերը միտված են Լեռնային Ղարաբաղում էթնիկ զտումներ իրականացնելու եւ Լեռնային Ղարաբաղն ամբողջությամբ հայաթափելու իր քաղաքականության հետեւողական իրագործմանը: Նա նաեւ շեշտել է Ադրբեջանի կողմից տարածաշրջանային անվտանգությունը խարխլող գործողություններին միջազգային հանրության համարժեք արձագանքի կարեւորությունը եւ գործուն քայլերի ձեռնարկումը՝ Արդարադատության միջազգային դատարանի վճռի անվերապահ կատարման ուղղությամբ: Փաշինյանն ու Միշելը մտքեր են փոխանակել նաեւ Հայաստան-Ադրբեջան բանակցային գործընթացի շուրջ, կարեւորել տարածաշրջանում կայունության ու խաղաղության ապահովման ուղղությամբ հետեւողական ջանքերը:

Նկատենք, որ Շառլ Միշելը Նիկոլ Փաշինյանի եւ նաեւ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի հետ հեռախոսազրույց էր ունեցել մեկ ամիս առաջ, ընդգծել Եվրամիության պատրաստակամությունը՝ օգնելու Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ կարգավորման գործընթացին, նպաստելու տարածաշրջանում երկխոսությանն ու խաղաղությանը:

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը երեկ նաեւ հեռախոսազրույց է ունեցել Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինի հետ: Այս մասին հայտնում են ՀՀ վարչապետի աշխատակազմից: Քննարկվել են Լաչինի միջանցքին եւ Լեռնային Ղարաբաղում ստեղծված հումանիտար իրավիճակին վերաբերող հարցեր:

Հավելենք, որ 2022-ի դեկտեմբերի 12-ից Ադրբեջանը փակ է պահում Արցախը Հայաստանին կապող միակ ճանապարհը, 2023-ի ապրիլի 23-ից էլ Ադրբեջանը փակել է Հայաստանն Արցախին կապող Հակարիի կամուրջը: Բաքվից հայտնել են, թե տեղում նոր անցակետ են տեղադրել՝ անվտանգության նկատառումներից ելնելով:

*ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ*

ԱՐՑԱԽ

# ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՆ ՓՈԽՈՒՄ

**Ապրիլի 26-ին հրավիրվել է ԱՀ ԱԺ ղեսպիրավական հարցերի մշտական հանձնաժողովի նիստ, որին ներկա էր Ազգային ժողովի նախագահ Արթուր Թովմասյանը: Օրակարգում առաջինը ԱՀ նախագահի կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացված՝ Արցախի Հանրապետության Սահմանադրության նախագծի քննարկման հարցն էր, որը ներկայացրել է ԱՀ նախագահի աշխատակազմի ղեկավարի տեղակալ Ժ. Միրզոյանը:**

Արցախի ԱԺ-ից հայտնում են, որ նախագծով առաջարկվում է վերափոխել կառավարման համակարգը՝ կառավարման նախագահական համակարգից անցում կատարելով կառավարման կիսանախագահական համակարգին՝ հաշվի առնելով ԱՀ անվտանգության ապահովման հրամայականը, ինչպես նաեւ ռազմական կամ արտակարգ դրության պայմաններում, արտակարգ իրավիճակներում պետական կառավարման համակարգի ճկունության ապահովման անհրաժեշտությունը:

Նախագծով առաջարկվում է կանոնակարգել բացառիկ դեպքերում հանրապետության նախագահի անուղղակի ընտրությունների հետ կապված հարաբերությունները: Առաջարկվում է նաեւ ռազմական դրության ժամանակ Ազգային ժողովին վերապահել հանրապետության նախագահ ընտրելու իրավունք՝ սահմանելով այդ լիազորությունների իրականացման կարգը:

4 կողմ ձայնով նախագիծն արժանացել է հանձնաժողովի հավանությանը: Այն առաջին ընթերցմամբ կներկայացվի ԱԺ հերթական նիստին:

Ըստ գործող Սահմանադրության՝ նախագահի կողմից ծանր հիվանդության կամ լիազորությունների կատարման համար այլ անհաղթահարելի խոչընդոտների առկայության դեպքերում, որոնք տեւականորեն անհնարին են դարձնում նրա լիազորությունների իրականացումը, Ազգային ժողովը, Գերագույն դատարանի եզրակացության հիման վրա, պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ, որոշում է կայացնում Հանրապետության նախագահի լիազորությունները դադարեցնելու մասին, նախագահի պաշտոնը թափուր մնալու դեպքում մինչեւ նորընտիր նախագահի կողմից պաշտոնի ստանձնումը նախագահի լիազորություններն իրականացնում է Ազգային ժողովի նախագահը:

«Պատերազմի կամ արտակարգ դրության ժամանակ Հանրապետության նախագահին անվստահություն հայտնելու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծ չի կարող ներկայացվել կամ քննարկվել: Հանրապետության նախագահին անվստահություն հայտնելու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծ չի կարող ներկայացվել կամ քննարկվել նաեւ այն դեպքում, երբ հանրապետության նախագահը ռազմական դրության ժամանակ հրամանագիր է ընդունել ընտրություններ չանցկացնելու վերաբերյալ», - ասված էր Արցախի Սահմանադրության մեջ:

Դրանից մեկ ամիս առաջ Արայիկ Հարությունյանը հայտարարել էր, թե Արցախում սահմանադրական ճգնաժամ չկա:

«Չի կարելի նման բան թույլ տալ, քանի որ կա հստակ գիտակցում, որ մեր հիմնական օրակարգը ծագած հրատապ խնդիրները հաղթահարելն է ու Արցախն այս իրավիճակից դուրս բերելը», - ասել է նա՝ անդրադառնալով Արցախի ներքաղաքական կյանքի վերաբերյալ քննարկումներին:

Այդ համատեքստում նա շեշտադրել է, որ միայն շրջափակման հարուցած ճգնաժամի հաղթահարումից հետո հնարավոր կլինի անդրադառնալ ներքաղաքական հիմնախնդիրների համակարգային լուծման հարցերին:

Արայիկ Հարությունյանը կարեւորել է ներքին միասնականության պահպանումը:

*ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ*

ԼՈՒՐԵՐ

## ԵՐԿԿՈՂՄ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ապրիլի 25-ին ՀՀ արտաքին գործերի նախարարությունում տեղի են ունեցել երկկողմ հարաբերությունների զարգացման եւ տարածաշրջանային անվտանգության ապահովման թեմայով խորհրդակցություններ ՀՀ եւ ՌԴ ԱԳՆ-ների միջեւ: Հայկական պատվիրակությունը գլխավորում էին ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալներ Մնացական Սաֆարյանը եւ Վահե Գեւորգյանը, ռուսական պատվիրակությունը՝ ՌԴ արտաքին գործերի նախարարի տեղակալ Միխայիլ Գալուզինը. տեղեկացնում են ՀՀ ԱԳՆ-ից:

Խորհրդակցությունների շրջանակներում կողմերը քննարկել են հայ-ռուսական երկկողմ օրակարգի մի շարք հարցեր:

Պաշտոնական Բաքվի սադրիչ հայտարարությունների եւ ագրեսիվ գործողությունների հետեւանքով տարածաշրջանում ձեւավորվող վտանգավոր իրավիճակի, այդ թվում՝ ռուսական խաղաղապահ զորակազմի պատասխանատվության գոտում գտնվող միջանցքում անցակետի տեղադրման ուղղությամբ ձեռնարկված քայլերի համատեքստում, ՀՀ ԱԳ նախարարի կողմից շեշտվել է 2020թ. նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության դրույթներին համապատասխան Լաչինի միջանցքի ռեժիմի վերականգնման ուղղությամբ Հայաստանի դաշնակիցների եւ գործընկերների կողմից հստակ արձագանքի եւ գործուն քայլերի անհրաժեշտությունը:

## ՉԻՆԱՍՏԱՆԻ ԱԳՆ–Ն ՄԵԿՆԱԲԱՆԵԼ Է

Չինաստանը կարծում է, որ ուկրաինական ռազմական հակամարտության կողմերը պետք է օգնեն նվազեցնել լարվածությունը եւ կրակի վրա յուղ չլցնեն: Այս մասին չորեքշաբթի հայտարարել է Չինաստանի ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչ Մաո Նինը՝ ի պատասխան ՏԱՍՍ-ի խնդրանքին՝ մեկնաբանել Մեծ Բրիտանիայի կողմից Ուկրաինայի զինված ուժերին աղքատացված ուրանով տանկերի արկերի մատակարարումները:

Երեքշաբթի Մեծ Բրիտանիայի պաշտպանության փոխնախարար Ջեյմս Հիփֆին, շոտլանդական «Ալբա» կուսակցությունից պատգամավոր Քենի Մաքասքիլի հարցերին գրավոր պատասխանելով, հաստատել է, որ Մեծ Բրիտանիան Ուկրաինային հազարավոր արկեր է ուղարկել Challenger 2 տանկերի համար, այդ թվում՝ աղքատացված ուրանով: Միաժամանակ նա հավելել է, որ Լոնդոնը չի վերահսկում դրանց օգտագործումը եւ հակամարտության ավարտից հետո դրանց օգտագործման հետեւանքները վերացնելու պարտավորություն չունի:

ԻՆՉ Է ԿԱՏԱՐՎԵԼ

# «ՀԵՍԱ ՏԵՄ՝ ՔԵԶ ԻՆՉ ԵՄ ԱՆԵԼՈՒ»

**ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Գարիկ Մկրտչյանին մեղադրանք է առաջադրվել, որ նա 2022 թվականի հոկտեմբերի 19-ին՝ ժամը 19:00-ի սահմաններում, տեղյակ լինելով իր նկատմամբ 2022 թվականի հոկտեմբերի 12-ին կայացված անհետաձգելի միջամտության որոշման մասին, Մասիս համայնքի կեսրոնական հրապարակում Մասիս-Արտաշատ ավտոբուսը նստելիս մոտեցել է մերձավոր ազգական հանդիսացող նախկին կնոջը՝ Գեղեցիկ Բաղալյանին, նստել նրա կողքին, բաճկոնի գրպանից հանել է մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես հարմարեցված դանակը եւ սպառնալիքն իրականացնելու իրական վտանգի առկայության պայմաններում հնչեցրել է սպանության սպառնալիք՝ ասելով. «Մորթելու եմ, սպանելու եմ»:**

Այդկերպ նա չի կատարել հիշյալ որոշման պահանջները:

Բացի այդ, 2022 թվականի դեկտեմբերի 8-ին՝ ժամը 19:00-ի սահմաններում, Մասիս-Արտաշատ ավտոբուսի մեջ Գարիկ Մկրտչյանը, հանդիսանալով Գեղեցիկ Բաղալյանի մերձավոր ազգականը՝ նախկին ամուսինը, սպառնալիքն իրականացնելու իրական վտանգի առկայության պայմաններում վերջինիս հասցեին հնչեցրել է սպանության սպառնալիք՝ ասելով. «Հեսա տե՛ս՝ քեզ ինչ եմ անելու, դեմքիդ կիսլատա եմ լցնելու»: Սրանից հետո Արտաշատ համայնքի Մխչյան գյուղի Արտաշատյան խճուղու 19-րդ տան դիմաց գտնվող կանգառի մոտ ձեռքով 2 անգամ հարվածել է Գեղեցիկ Բաղալյանի դեմքի շրջանին՝ պատճառելով ֆիզիկական ցավ եւ ստորին ծնոտի ձախ կեսի փափուկ հյուսվածքների սալջարդ, այնուհետեւ հագուստի գրպանից հանելով մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես հարմարեցված դանակը՝ մոտեցրել է Գեղեցիկ Բաղալյանի պարանոցի շրջանին եւ սպառնալիքն իրականացնելու իրական վտանգի առկայության պայմաններում վերջինիս հասցեին հնչեցրել է սպանության սպառնալիք՝ ասելով. «Հեսա քեզ կմորթեմ»:

Այնուհետեւ Գարիկ Մկրտչյանը մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես հարմարեցված դանակով հարվածել է վերոնշյալ վեճին միջամտած Գեղեցիկ Բաղալյանի եղբոր՝ Արսեն Բաղալյանի թիկունքի աջ հատվածին՝ վերջինիս առողջությանը դիտավորությամբ պատճառելով կրծքավանդակի աջ հետին մակերեսի կտրած-ծակած, թափանցող վնասվածքի ձեւով կյանքին վտանգ սպառնացող մարմնական վնասվածք:

*ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ*

ԼՈՒՐԵՐ

## ՈՐՈՇՈՒՄ ԵՆ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, թե որ դատավորն է քննելու ԱԺ պատգամավորներ Վլադիմիր Վարդանյանի եւ Միհր Սահակյանի միջադեպի վերաբերյալ քրեական գործը: Վերջինս Երեւան քաղաքի դատավոր Տիգրան Ոսկանյանն է: Հիշեցնենք, որ ԱԺ պետահրավական հարցերով հանձնաժողովի փակ նիստում «Հայաստան» խմբակցության պատգամավոր Միհր Սահակյանը բռունցքով հարվածել էր իշխանական պատգամավոր Վլադիմիր Վարդանյանի հոնքին: Քրեական գործ էր հարուցվել խուլիգանության եւ հարվածներ հասցնելու հատկանիշներով: Միհր Սահակյանը խորհրդարանի համաձայնությամբ զրկվել էր պատգամավորական անձեռնմխելիությունից:

## ԳՈՂՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ

Ապրիլի 22-ին ոստիկանություն զանգահարած քաղաքացին հայտնում էր, որ գիշերվա ժամը 1-ին փորձել են գողություն կատարել Արագածոտնի մարզի Նոր Երզնկա գյուղում գտնվող իր տնից: Ոստիկանությունից հայտնում են, որ նախաձեռնվել է քրեական վարույթ, իրականացվել են անհրաժեշտ գործողություններ, որոնց արդյունքում Աշտարակի համայնքային ոստիկանները ստացել են հիմնավոր տեղեկություններ, որն իրացրել են նույն օրը՝ երեկոյան ժամը 7-ին: Նույն գյուղի բնակիչ 41-ամյա տղամարդը հայտնաբերվել է Փարպի գյուղի դաշտում, բնակարանային գողություն կատարելու փորձ կատարելու կասկածանքով ձերբակալվել է: Նա խոստովանել է, որ աստիճանը տեղադրել է եւ խմիչք գողանալու մտադրությամբ տան երկրորդ հարկի պատուհանից մտել է համագյուղացու տուն, սակայն ձեռնունայն հեռացել է, քանի որ առաջին հարկում մարդ է եղել:

ԻՐԱՎԱԿԱՆ

## ՈՐՈՇՈՒՄ ԵՆ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Երեկվանից լրատվամիջոցներում տեղեկություններ են տարածվել այն մասին, որ պաշտոնանկ է արվել Արցախում տեղակայված ռուսական խաղաղապահ զորախմբի հրամանատար Անդրեյ Վոլկովը: Ընդ որում՝ տեղեկություններ կան նաեւ այն մասին, որ Վոլկովն արդեն վերադարձել է Ռուսաստան, եւ նրան այդ պաշտոնում կփոխարինի ՌԴ պաշտպանության նախարար Սերգեյ Շոյգուի խորհրդական Ալեքսանդր Լենցովը: Բանն այն է, որ անցակետի տեղադրումից հետո Շուշիի շրջանի 4 համայնքներ մնացել են լիակատար շրջափակման մեջ, եւ շատերն այս փոփոխությունը կապում են նաեւ այդ հանգամանքի հետ: Ինչպես նշեցինք, ըստ մամուլի հրապարակումների՝ նոր հրամանատարը Ռուսաստանի պաշտպանության նախարարի խորհրդական 66-ամյա Ալեքսանդր Լենցովն է: Գեներալ-գնդապետը նախկինում Ռուսաստանի զինված ուժերի ցամաքային զորքերի գլխավոր հրամանատարի տեղակալն էր: Հավելենք, որ 2020 թվականի նոյեմբերից Արցախում տեղակայված ռուսական զորախմբի արդեն երեք հրամանատար է փոխվել. Վոլկովից առաջ խաղաղապահ առաքելությունը ղեկավարել է Գենադի Անաշկինը, մինչ այդ էլ՝ Ռուստամ Մուրադովը:

*ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ*

## ՈՐ ԴԱՏԱՎՈՐՆ Է ՔՆՆԵԼՈՒ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, թե որ դատավորն է քննելու ԱԺ պատգամավորներ Վլադիմիր Վարդանյանի եւ Միհր Սահակյանի միջադեպի վերաբերյալ քրեական գործը: Վերջինս Երեւան քաղաքի դատավոր Տիգրան Ոսկանյանն է: Հիշեցնենք, որ ԱԺ պետահրավական հարցերով հանձնաժողովի փակ նիստում «Հայաստան» խմբակցության պատգամավոր Միհր Սահակյանը բռունցքով հարվածել էր իշխանական պատգամավոր Վլադիմիր Վարդանյանի հոնքին: Քրեական գործ էր հարուցվել խուլիգանության եւ հարվածներ հասցնելու հատկանիշներով: Միհր Սահակյանը խորհրդարանի համաձայնությամբ զրկվել էր պատգամավորական անձեռնմխելիությունից:

ԼՈՒՐԵՐ

## ԱՆՕՐԻՆԱԿԱՆ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՓՈՐՁ

Օրերս ՀՀ ՊԵԿ մաքսանենգության դեմ պայքարի վարչության «Զվարթնոց» բաժնի աշխատակիցները «Արմենիա միջազգային օդանավակայաններ» ՓԲ ընկերության «Զվարթնոց» օդանավակայանի ուղեւորային համալիրի մաքսային հսկողության գոտում Արեւմտյան մաքսատուն վարչության աշխատակիցների հետ համատեղ մաքսային զննման են ենթարկել Միլան-Երեւան ավիաչվերթով Հայաստանի Հանրապետություն ժամանած 2 քաղաքացու պատկանող ուղեբեռները. վերջիններս ընտրել էին մաքսային հսկողության «կանաչ ուղի» ընթացակարգը:

Քաղաքացիների 5 ուղեբեռի նկատմամբ իրականացված մաքսային հսկողության արդյունքում վերջիններիս մոտ հայտնաբերվել է չհայտարարագրված ընդհանուր 76 անուն ապրանք՝ բրենդային հագուստ, օծանելիք, ժամացույցներ եւ այլ աքսեսուարներ: Հայտնաբերված ապրանքի ընդհանուր արժքը գերազանցել է 50 մլն դրամը:

Միլանից Երեւան ժամանած քաղաքացիների մոտ չհայտարարագրված ապրանքներ հայտնաբերելու փաստով ՊԵԿ մաքսանենգության դեմ պայքարի վարչության աշխատակիցների կողմից կազմվել են մաքսային կանոնների խախտման վերաբերյալ արձանագրություններ՝ «ՀՀ մաքսային կարգավորման մասին» օրենքի 316-րդ հոդվածի հատկանիշներով, եւ տրամադրվել ՊԵԿ իրավաբանական վարչություն:

## ԺԱՄԵՐ ԱՆՑ ՄԱՀԱՑԵԼ Է

Երեւանում ապրիլի 25-ին ողբերգական դեպք է տեղի ունեցել. Ժամը 16:25-ի սահմաններում ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության Արաբկիրի բաժին ահազանգ է ստացվել, որ Կոմիտասի պողոտա 56 շենքի փողոցային հատվածում քաղաքացի է ընկած՝ անգիտակից վիճակում: Դեպքի վայր ժամանած Երեւանի 1-03 շտապօգնության բժիշկների հերթապահ խումբը վիրավորին ծայրահեղ ծանր վիճակում տեղափոխել է թիվ 1 համալսարանական հիվանդանոց, որտեղ, սակայն, ժամեր անց նա, գիտակցության չգալով, մահացել է:

Ոստիկանության Արաբկիրի բաժնի ծառայողները պարզել են, որ մահացածը Երեւանի բնակիչ 31-ամյա Արամ Չ.-ն է: Դեպքի փաստով Հայաստանի քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Արաբկիրի քննչական բաժնում նախաձեռնվել է քրեական վարույթ: Տեղի ունեցածը ինքնասպանություն է, դժբախտ պատահար, թե անզգուշության հետեւանք՝ պարզվում է: Քննիչի որոշմամբ՝ նշանակվել է դիակի դատաբժշկական փորձաքննություն:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ ապրիլի 21-ից 25-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 161 դեպք, որոնցից 10-ը՝ նախկինում կատարված:*

# ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԼՈՒՐԵՐ

## ԱՐՑԱԽՑԻՆԵՐԸ ՉԵՆ ՀԵՏԵՎՈՒՄ

Արցախն արդեն 5 ամիս է՝ շրջափակման մեջ է:

Դեռեւս դեկտեմբերից Ադրբեջանը բնապահպանական կեղծ պատճառաբանություններով փակել էր Հայաստանն Արցախին կապող միակ ճանապարհը՝ Լաչինը: Արդեն ապրիլի 23-ին Ադրբեջանը փակել է Հայաստան-Արցախ այլընտրանքային ճանապարհին գտնվող Հակարիի կամուրջը՝ ամբողջական շրջափակելով Արցախը, այնտեղ նաեւ անցակետ է տեղադրել:

ԱԺ պաշտպանության հանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարյանը հորդորում է արցախցիներին դիմանալ բլոկադային:

ArmLur.am-ի հետ զրույցում Արցախի «Արդարություն» կուսակցության ղեկավար Դավիթ Գալստյանը, արձագանքելով Անդրանիկ Քոչարյանին, ասում է՝ Արցախը հանձնողների կոչերի կարիքն արցախցիները չունեն. «Եթե Անդրանիկ Քոչարյանն Արցախի մասին մտածող մարդ լիներ, գոնե մեկ անգամ իր գործընկերներին կզանգեր, կիմանար նրանց որպիսության մասին, կհետաքրքրվեր՝ ինչով կարող է օգտակար լինել: Հանրային դաշտում արցախցիներին կոչ անել՝ դիմացե՛ք, ճիշտ չէ: Արցախում Անդրանիկ Քոչարյանին չեն ընդունում: Արցախը հանձնողների կոչերին արցախցիները չեն հետեւում»,- ասում է արցախցի պատգամավորը:

## ՆՈՐ ՆԱԽԱԳԻԾ Է ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼ

Հայաստանի կառավարությունը նոր նախագիծ է ներկայացրել եւ առաջարկում է փոփոխություն կատարել «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում: Մի քանի փոփոխություններ են կատարվելու: Դրանցից մեկով Բարձրագույն դատական խորհրդի անդամին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը Բարձրագույն դատական խորհուրդը պետք է քննի ամբողջ կազմով: Ընդ որում՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննության համար Բարձրագույն դատական խորհրդում ձեւավորվում է Բարձրագույն դատական խորհրդի չորս անդամ ընդգրկող կազմ: Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ Բարձրագույն դատական խորհրդի որոշումն ընդունվում է խորհրդակցական սենյակում բաց քվեարկությամբ եւ անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Եթե քվեարկության արդյունքով որոշման օգտին բավարար քանակի ձայների բացակայության պատճառով որոշում չի ընդունվում, ապա դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդությունը մերժելու վերաբերյալ որոշումը համարվում է ընդունված:

*Ն.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ*

ՄԱՐՔ

## ՎՆԱՍԻ ՉԱՓԵՐԸ ՉԵՆ ԿԱՐՈՂԱՆՈՒՄ ՃՇՏԵԼ

**«Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Լ. Տեր-Սիմոնյանը մարտի 31-ին հրաման է ստորագրել այդ ՊՈԱԿ-ի ենթակայությամբ գործող հիմնարկների տարածքներում, այդ թվում՝ Իջեւանի դենդրոպարկում ապրիլի 3-28-ը ըստ հաշվեգնահատման ցուցակների եւ անտառահատման տոմսերի սահմանված կարգով սանիտարական հատում, բնափայտի մթերում եւ փայտանյութի պահեստավորում իրականացնելու մասին: Ապրիլի 14-ին Իջեւանի դենդրոպարկի տնօրեն Մեխակ Սայադյանը Լ. Տեր-Սիմոնյանին զեկուցագրով հայտնել է, որ Տավուշի մարզային քննչական վարչությունում քննվող թիվ 38164721 քրեական վարույթով նշանակվել են համապատասխան փորձաքննություններ, որոնց ընթացքում արգելվում է իրականացնել չորացած ծառերի եւ թփերի հատում, հանում եւ հեռացում: Մ. Սայադյանը հայտնեց, որ վերոհիշյալ քրեական գործով նշանակված փորձաքննություններով պետք է ճշտվեն Իջեւանի գինու, կոնյակի գործարանի կողմից Աղստեւ գետի հունում ապօրինի շինարարարության, Իջեւանի դենդրոպարկի ջրառը ջրազրկելու հետեւանքով դենդրոպարկին հասցված վնասները:**

Այդ փորձաքննությունները դեռ չեն անցկացվել Հայաստանում հազվագյուտ, արժեքավոր ծառերի մասնագետներ չլինելու պատճառով. այդ մասնագետներից պետք է կազմվեր վնասները գնահատող հանձնաժողովը: Իջեւանի գինու, կոնյակի գործարանի կողմից Աղստեւ գետի հունում կատարված ապօրինի մեծածավալ շինարարության հետեւանքով ավելի քան երկու տարի առաջ դենդրոպարկի ջրառը զրկվել է Աղստեւի ինքնահոս ջրից: Դենդրոպարկի ջրառը վերագործարկելու համար պահանջվեց երկու տարի եւ յոթ ամիս, որի ընթացքում դենդրոպարկում չորացան շուրջ 1500 հազվագյուտ, արժեքավոր ծառեր, թփեր եւ մոտ 24 հազար տնկի: Իջեւանի գինու, կոնյակի գործարանը, Աղստեւի աջ ափին պատ կառուցելով, այժմ դենդրոպարկի ջրառը վերագործարկել է: Աղստեւ գետի մաս հանդիսացող ջրային հողն առանց ՀՀ ջրային կոմիտեի եզրակացության վարձակալությամբ Իջեւանի գինու, կոնյակի գործարանին հանձնելու եւ գործարանի կողմից ապօրինի շինարարություն կատարելու դեպքի առթիվ 2021թ. հոկտեմբերի 15-ին, ՀՀ քրեական օրենսգրքի 308 հոդվածի 1-ին մասով եւ 290 հոդվածի 1-ին մասով, քրեական վարույթ է նախաձեռնվել, սակայն նախաքննությամբ մինչ այժմ որեւէ մեկի նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցված չէ:

Իջեւանի գինու, կոնյակի գործարանն առանց շինթույլտվության հենապատ կառուցելու համար 2021թ. մարտի 29-ին տուգանվել է 200 հազար դրամի չափով: Գործարանը շարունակել է կառուցապատումը եւ 2021թ. հուլիսի 14-ին երկրորդ անգամ է ենթարկվել վարչական պատասխանատվության՝ 2 միլիոն 500 հազար դրամի չափով: Սակայն Իջեւանի գինու, կոնյակի գործարանը «պարգեւատրվել է»՝ վարձակալությամբ դենդրոպարկից ստանալով 5,7 հեկտար տարածք:

2023թ. հունվարի 16-ին «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի գրասենյակում կայացել է Իջեւանի դենդրոպարկի տարածքի երկրորդ մասը՝ 5,7 հեկտարը վարձակալության տրամադրելու մրցույթ, որում հաղթել է Իջեւանի գինու, կոնյակի գործարանը: 2023թ. փետրվարի 2-ին «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրեն (այժմ նախկին) Լեւոն Գաբրիելյանի եւ Իջեւանի գինու, կոնյակի գործարանի միջեւ կնքվել է վարձակալության պայմանագիր, 5,7 հա տարածքը, որը դենդրոպարկի մաս է, հատկացվել է գինու, կոնյակի գործարանին հանգստի գոտու վերածելու նպատակով:

*ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ*
*Տավուշ*

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

## ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՆՈՐ ՄԱՐՔԱԴՊՐՈՑ ԿՍՏԵՂԾՎԻ

**ArmLur.am-ը տեղեկացավ, որ նախատեսվում է ստեղծել «Երեւան» պետական փակ բաժնետիրական ընկերություն: Հիմնավորման մեջ նշվում է, թե այն ստեղծելով՝ հնարավոր կլինի կազմակերպել եւ օգտագործել գոյություն ունեցող մարզադաշտը կից սպորտային համալիրով եւ անցկացնել սպորտային միջոցառումներ ու հավաքներ, իրականացնել մարզման չափորոշիչներին համապատասխան ուսումնամարզական ծրագրեր, որը հնարավորություն կտա նաեւ պահպանել գույքը, ձեռք բերել նորը եւ ներդրումներ կատարել:**

Հիմնավորման մեջ նշվում է, որ ընկերության գործառույթների շրջանակներում կիրականացվեն նաեւ հաշմանդամություն ունեցող անձանց եւ տարբեր մարզաձեւերի՝ 18 տարեկանից բարձր տարիքի հավաքականների թեկնածուների մարզումները: Նախագիծը մշակվել է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության կողմից:

Որպես հիմնավորում՝ նշվում է, որ այժմ Հայաստանի Հանրապետությունում գործում է միայն մեկ «Բարձրագույն վարպետության մարզադպրոց» ՊՈԱԿ (Շիրակի մարզի Գյումրի քաղաք), որը, սակայն, իրականացնում է միայն մանկապատանեկան մարզադպրոցի գործառույթներ, ինչը նշանակում է, որ Հայաստանի Հանրապետության հավաքականների 18 տարեկանից բարձր թեկնածու մարզիկների եւ սահմանափակ կարողություններով անձանց մարզումները հնարավոր չէ այդտեղ անցկացնել:

Ըստ իրականացված ուսումնասիրությունների հիման վրա կատարված վերլուծությունների՝ յուրաքանչյուր տարի հաշմանդամություն ունեցող 120 մարզիկ հնարավորություն կունենա մարզվել ընկերությունում:

Միաժամանակ ներկայումս բաց է մնում նաեւ 18 տարեկանից բարձր թեկնածու մարզիկների մարզումների շարունակականության խնդիրը:

Ընկերության հիմնումը ենթադրում է ուսումնամարզական կենտրոնի ստեղծում, որը կապահովի 2 թիրախային խմբերի մարզումների հետագա շարունակականությունը:

*ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ*

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 8 ՃՏՊ. 10 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԼՈՒՐԵՐ

## 71 ՄԻԼԻԱՐԴ ԴՐԱՄԻ ՀԱՏՈՒՑՈՒՄ

Զինծառայողների ապահովագրության հիմնադրամը 2023 թվականի առաջին եռամսյակում 52 դեպքով հատուցումներ է տրամադրել 33 զոհված (այդ թվում՝ Ազատ գյուղում հրդեհից զոհված 15 զինծառայողների), 6 անհայտ բացակայող զինծառայողների ընտանիքներին, 1՝ առաջին, եւ 12՝ երկրորդ կարգի հաշմանդամություն ունեցող շահառուներին: Այս մասին երեկ՝ ապրիլի 26-ին՝ մամուլի ասուլիսի ժամանակ, նշեց Զինծառայողների ապահովագրության հիմնադրամի գլխավոր գործադիր տնօրեն Կարինե Սարգսյանը: Նրա խոսքով՝ հիմնադրամը 2017-2022 թվականներին 5090 դեպքով ընդհանուր տրամադրել է 71 միլիարդ դրամի հատուցում: Միայն 2022 թվականին հիմնադրամը 411 դեպքով տրամադրել է 16.8 միլիարդ դրամի հատուցում:

Զինծառայողների ապահովագրության հիմնադրամի տնօրենը նշեց, որ հիմնադրամը 2022 թվականին 24 տոկոս եկամտի աճ է ունեցել՝ շնորհիվ պարտադիր վճարների, իսկ նվիրատվությունները, ընդհակառակը, նվազել են 53 տոկոսով: Սարգսյանն ընդգծեց, որ Զինծառայողների ապահովագրության հիմնադրամը 3 տարի ֆինանսական աջակցություն կտրամադրի պատերազմի հետեւանքով հաշմանդամություն ձեռք բերած, բայց բժշկասոցիալական փորձաքննության հետեւանքով երկրորդից երրորդ կարգ տեղափոխված զինծառայողներին: Սարգսյանը հավելեց նաեւ, որ հիմնադրամը վերակազմավորման փուլում է գտնվում, պատրաստվում է առանձնանալ Կենտրոնական բանկից եւ դառնալ անկախ ձեռնարկություն: Նշենք, որ Զինծառայողների ապահովագրության հիմնադրամը ստեղծվել է Հայաստանի եւ Արցախի սահմանները պաշտպանելիս զոհված կամ հաշմանդամություն ստացած զինծառայողներին, նրանց ընտանիքներին ապահովագրելու եւ հատկացումներ տրամադրելու նպատակով: Այսօր նաեւ հայտարարվեց, որ հիմնադրամը փոխում է անունը. այսուհետեւ այն կկոչվի «Զինապահ» զինծառայողների ապահովագրության ազգային հիմնադրամ:

## ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՇԱՐՔ՝ ՊԵԿ-ՈՒՄ

ՊԵԿ-ը շարունակում է մաքսային ծառայողներ պատրաստելու դասընթացների շարքը: Դասընթացը հաջողությամբ ավարտած մասնակիցները կստանան աշխատելու հնարավորություն Մաքսային ծառայությունում: Պետական եկամուտների կոմիտեն տեղեկացնում է, որ 2023 թվականի ապրիլի 5-ից մեկնարկել է մաքսային ծառայողի պատրաստման դասընթացի ընդունելությունը: Դասընթացը հաջողությամբ ավարտած մասնակիցները կստանան հավաստագիր եւ աշխատելու հնարավորություն Մաքսային ծառայության տարբեր պաշտոններում: Դասընթացի ընդունելությանը կարող են մասնակցել հայերենին տիրապետող, 18 տարին լրացած, բարձրագույն կրթություն ունեցող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները: Դասընթացի ընդունելության կարգը, ժամկետները, պահանջվող փաստաթղթերը եւ այլ մանրամասներ ներկայացված են ՊԵԿ պաշտոնական կայքում: Դիմելու վերջնաժամկետը 2023 թվականի մայիսի 5-ն է:

ՔԱՂԱՔԱՑՈՒ ԽՆԴՐԱՆՔՈՎ

# ԻՆՉՈ՞Ւ ՉԻ ԻՐԱԿԱՆԱՆՈՒՄ ԱՐԵՎԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ

**30 տարի առաջ՝ անկախության մութ ու ցուրտ տարիներին, ակադեմիկոս Պարիս Հերունին, աղա նաեւ ես մի կողմ թողեցինք մեր նախասիրած գիտական ուղղությունները (Պարիս Հերունին ռադիոտեխնիկայի բնագավառում համաշխարհային հայտնի դեմք էր, ես էլ ունեի իմ ձեռքբերումները ԻԿ, լազերային ու ռենտգենային դիագնոստիկայի բնագավառում՝ ունենալով ԽՄՀՄ Էլեկտրոնային արդյունաբերության նախարարության գլխավոր կոնստրուկտորի կարգավիճակը) եւ անցանք արեւային տեխնիկային, որովհետեւ բոլոր հաշվարկները ցույց էին տալիս, որ առաջիկայում արեւային էներգետիկան աշխարհի մակարդակով դառնալու է ամենաարդահանջվածն ու արագ զարգացող գիտաարդյունաբերական ուղղությունը:**

Հայաստանը կարող էր մոնոպոլ դիրք գրավել աշխարհում, եթե կենտրոնական այդ բնագավառի վրա՝զգալի թվով մասնագետներ պատրաստելով ու նոր տեխնոլոգիաներ մշակելով: Անկախ Հայաստանին բաժին հասած գիտատեխնիկական պոտենցիալը բավարար էր, որպեսզի մենք դառնայինք այդ կարեւոր ուղղության համաշխարհային լիդերը՝զարգացնելով նաեւ ռազմական արդյունաբերությունը: Ծրագիրը երկրաստեղծ է, ծրագիրը համազգային է եւ Հայաստանի տնտեսության համար հակաճգնաժամային, բայց, չնայած իր հույժ կարեւորությանը, այն դեռեւս չի կայանում, կյանք չի մտնում. ինչո՞ւ: Նշենք ծրագրի մի քանի հաշվարկային տվյալները. 800 հազար աշխատատեղ, աղետի գոտու արդյունաբերության զարգացում ու բնակչության սոցիալական վիճակի բարելավում, ժամանակակից գյուղատնտեսության եւ ռազմական արդյունաբերության զարգացում, 12 տրիլիոն դոլարի միջազգային շուկա, սփյուռք-Հայաստան-Արցախ արդյունաբերական համալիրի ստեղծում, երկրի էներգետիկ վիճակի բարելավում՝ ընդհուպ մինչեւ էներգետիկ անկախության եւ էներգետիկ կենսունակության բարձր մակարդակի ապահովում եւ այլն: Ծրագիրը պատրաստ է ներդրման համար, բայց կյանք չի մտնում, որովհետեւ կան խանգարող հանգամանքներ: Ի՞նչ կլիներ, եթե ծրագիրը ժամանակին իրականանար: Կլիներ այն, որ պատերազմում չէինք պարտվի, կապիտուլյացիայի չէինք ենթարկվի, հազարավոր զոհեր ու հաշմանդամներ չէինք ունենա, այս աստիճանի թշվառ, նվաստացած ու աշխարհի կողմից մերժված չէինք լինի, Պուտին-Էրդողան-Ալիեւ հանցագործների ձեռքին խաղալիք չէինք դառնա: Նման իրավիճակում է հայտնվել ոչ միայն Հերունի-Համազասպյան արեւային ծրագիրը, այլեւ շատ ու շատ այլ ծրագրեր, որոնք եւս Հայաստանում տեղ չեն գտնում մեկ պարզ պատճառով՝ Հայատանում չկա այն բարենպաստ միջավայրը, որն անհրաժեշտ է ժամանակակից գիտության, նոր տեխնոլոգիաների վրա հիմնված արդյունաբերության ու գյուղատնտեսության զարգացման համար. մեղավորը կոռուպցիայի բարձր մակարդակն է, որը դարձել է համակարգային ու մեր օրերում բուռն զարգացում է ապրում: Մեզ նման կոռումպացված երկրում հնարավոր չէ պահպանել սեփական բիզնեսը, անվտանգ դարձնել ֆինանսական ներդրումները, պաշտպանել հեղինակային իրավունքները: Կոռուպցիայի դեմ պայքարի հարցում առանձնակի հույսեր չի ներշնչում ՀՀ նորանշանակ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը. նրա առաջին իսկ քայլերը տարակուսանք են առաջացնում: Խոսենք փաստերով. «Ժողովրդի» փետրվարի 17-ի համարից տեղեկանում ենք, որ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի տնօրեն Արգամ Հովսեփյանի պաշտոնավորման օրերը հաշված են, բայց դատախազությունում համապատասխան կադր դեռ չեն կարողանում գտնել: Արդար կլիներ, որ քրեական հետապնդում սկսվեր ոչ միայն պրոֆեսոր Չարչյանի, այլ այդ եզրակացությունը տված Արգամ Հովսեփյանի նկատմամբ: Իմ կարծիքով՝ Արգամ Հովսեփյանի նկատմամբ քրեական հետապնդում կարելի է սկսել կեղծ եզրակացությունների այլ փաստերով եւս. դրանք շատ են, որոնցից մեկը ես նշել էի ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանին ուղղված իմ «բաց նամակում» («Ժողովուրդ» օրաթերթ, մարտի 22, եւ «Իրավունք» թերթ՝ https://iravunk.com): Վերջին տարիներին տրված փորձագիտական կեղծ եզրակացությունների ուսումնասիրությունները նախաձեռնելու եւ Ա. Հովսեփյանի հանցագործությունները բացահայտելու փոխարեն, հարգարժան տիկին դատախազը «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի նոր տնօրենի փնտրտուքի մեջ է: Ի՞նչ է նշանակում, թե գլխավոր դատախազությունում Արգամ Հովսեփյանին փոխարինող կադր դեռ չեն գտել. ո՞վ է այդ գործն անելու. ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյա՞նը, ով ընդհանրապես կապ չունի ՀՀ ԳԱԱ համակարգում գործող «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի հետ, թե՞ ՀՀ ԳԱԱ նախագահ ակադեմիկոս Աշոտ Սաղյանը, ում հրամաններով էլ ազատվում ու պաշտոնի են նշանակվում այդ կազմակերպության տնօրենները: Այստեղ է պարզվում այն չգրված դերն ու նշանակությունը, որն իր կազմակերպման օրվանից ի վեր տրված է «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ին. Հայաստանի դատաիրավական համակարգի համար ստեղծել կառավարվելի ու հնազանդ մի ինստիտուտ, որը դատաքննչական մարմիններին կտրամադրի կոռուպցիոն գործարքների համար անհրաժեշտ «փաստերն» ու «ապացույցները»՝ բնականաբար առանձնակի խոշոր կաշառքի դիմաց. չի բացառվում, որ որոշ դեպերում դրանք կարող են լինել պետպատվերով: Մի խոսքով, փորձագիտական այդ մահակը անհրաժեշտ է, որպեսզի դատաիրավական համակարգը կարողանա օրինականության իմիջի անվան տակ փակի բոլորել բերանները եւ պահպանել կոռուպցիայի բարձր մակարդակը:

Հարգանքով՝

Երկրների հելիոֆիկացիայի ծրագրի հեղինակ, տեխնիկական գիտությունների դոկտոր Վահան Համազասպյան

Երեւան, Մոսկովյան 21, բն 9

Հեռ.՝093-35-95-53

10/04/2023թ.

ԱՀԱՋԱՆԳ

# ՌՈՒՍԱԿԱՆ ԵՐԵՔ ԻՆՔՆԱԹԻՌ Է ԿԱԼԱՆՎԵԼ

**Գերմանիայի եւ Մեծ Բրիտանիայի կործանիչները Բալթիկ ծովի միջազգային օդային տարածքում կալանել են ռուսական երեք հետախուզական ինքնաթիռ:**

«Գերմանիայի եւ Բրիտանիայի Eurofighter կործանիչներին ահազանգվել է՝ նույնականացնելու 3 ռազմական ինքնաթիռները: Երկու «Սու-27» եւ մեկ «Իլ-20» ինքնաթիռները Ռուսաստանից կրկին առանց հաղորդիչ ազդանշանի թռել են Բալթիկ ծովի միջազգային օդային տարածքում»,- նշված է հաղորդագրությունում:

Մերձբալթյան երկրները՝ Էստոնիան, Լատվիան եւ Լիտվան, չունեն սեփական մարտական ավիացիա, ուստի 2004 թվականից նրանց օդային տարածքի անվտանգությունն ապահովում են ՆԱՏՕ-ի ուժերը: Այդ նպատակով ՆԱՏՕ-ի գծով դաշնակիցները հերթով Բալթյան երկրներ են փոխադրում իրենց ինքնաթիռներն ու անձնակազմը:

Ինչպես հիշեցնում է Deutsche Welle-ի ռուսական ծառայությունը, ապրիլի սկզբին՝ ութամսյա ժամկետը լրանալուց հետո, Բունդեսվերը Բալթյան ծովի օդային տարածքի անվտանգության ապահովման ՆԱՏՕ-ի առաքելությունը ռոտացիայի սկզբունքով հանձնել է Միացյալ Թագավորությանը: Մինչեւ ապրիլի վերջը Գերմանիան կշարունակի աջակցություն ցուցաբերել Մեծ Բրիտանիային, իսկ մայիսի սկզբին կսկսվի գերմանական ինքնաթիռների տեղափոխումը Գերմանիա:

*●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:*

ԱՐՄԱՏՆԵՐ

# ՄՏԱԴԻՐ Է ԱՅՑԵԼԵԼ ՀԱՅԱՍՏԱՆ

**Ամերիկացի դերասան Ջո Մանգանիելոն հայտնի է «Սուդեր Մայֆ» եւ «Իրական արյուն» ֆիլմերում իր հիթային դերերով, իսկ այժմ նա կիսվել է իր ընտանիքի պատմությամբ, արմատներով եւ հայկական մշակույթով:**

Գլենդելի «Ալեքս» թատրոնում Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված միջոցառման ժամանակ նա խոսել է իր ընտանիքի անցյալի մասին: Ջոն պատմել է իր մեծ տատի պատմությունը, որը փրկվել է 1915 թվականի Հայոց ցեղասպանությունից եւ տեղափոխվել Ամերիկա:

1915 թվականին Օսմանյան կայսրության (ժամանակակից Թուրքիա) ձեռքով սպանվել է 1,5 միլիոն հայ: Հայերին վտարել են իրենց տներից, տանջել, սովամահ արել ու սպանել: Օսմանյան կայսրությունը գրավել է նաեւ Արեւմտյան Հայաստանի հողերը: Նրա մեծ տատը ողջ է մնացել, սակայն նրան ուղարկել են վերաբնակեցման ճամբար, ուր հղիացել է գերմանացի սպայից:

Ծնվել է աղջիկ՝ Մանգանիելոյի տատիկը, եւ, ի վերջո, տեղափոխվել է Վուսթեր՝ Մասաչուսեթս նահանգ, եւ ամուսնացել է հայի հետ:

Մանգանիելոն նշել է, որ կարեւոր է նախնիների պատմություններով կիսվելն ու խնդիրների վերաբերյալ իրազեկվածության տարածումը: «Ես չէի գիտակցում, թե որքան թերի է ներկայացված հայոց պատմությունը: Ես չէի գիտակցում միայն այն պատճառով, որ իմ մեծ տատիկը ողջ էր մնացել, ուստի կարող եմ այսօր լինել այստեղ՝ պատմելու նրա պատմությունը, անունը տալու եւ մասնակցելու դոկտոր Գեյթի «Արմատները փնտրելով» շոուում, որպեսզի կարողանամ կիսվել նրա պատմությամբ: Ես չէի հասկանում, թե այս պատմություններից քանիսը չեն լսվել, եւ քանի հոգի չգիտի հայերի պատմությունը»,- ասել է նա:

«Վայրագությունները շարունակում են տեղի ունենալ նույնիսկ հիմա: Սա միանշանակ ճիշտ չէ. եթե ինչ-որ հետեւանքներ լինեին, ապա միգուցե կարողանայինք խուսափել Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ տեղի ունեցածից»,- ասել է Մանգանիելոն:

«Երբ կա սփյուռք, երբ կան մարդիկ, որոնք շրջում են, որոնք գոյատեւում են սննդի, մշակույթի, լեզվի, կրոնի շնորհիվ, ես հասկանում եմ, թե ինչու էր դա այդքան կարեւոր նրա համար»:

Մանգանիելոն գենետիկ թեստի միջոցով է իմացել իր ընտանիքի անցյալի եւ բազմամշակութային արմատների մասին: Նա նաեւ կիսվել է իր պատմությամբ եւ ավելին իմացել դրա մասին, երբ հայտնվել է Հենրի Լուիս Գեյթսի «Փնտրելով արմատները» շոուի մի դրվագում: Նրա խոսքով՝ ամբողջ գործընթացը տեւել է մոտ 10 տարի: «Այնպես որ, ինչպես ասացի, դա մեծ բացահայտման գործընթաց էր: Եվ հիմա ես կարող եմ ժամանակս ծախսել՝ սովորելով այս բոլոր բաները, ապա գտնել դրանց մասին տարբեր ձեւերով խոսելու ուղիներ»,- նշել է նա:

Նրա մայրը հայուհի է եղել, ուստի Մանգանիելոն եւ նրա եղբայրը մեծացել են հայկական սննդով, մշակույթով եւ լեզվով շրջապատված: «Մայրս հայ էր, ուստի, գիտեք, ես մեծացել եմ այդ ուտելիքով: Ես մեծացել եմ խաղողի թփերով, լահմաջոյով, սուջուխով, փլավով ու թաբուլեով: Դա իմը չէ, բայց տոննաներով եմ կերել: Եվ մայրս մեզ համար հենց դա էր պատրաստում»:

Մանգանիելոն եւ նրա եղբայրը եւս մասնակցել են Թուրքիայի հյուպատոսության դիմաց անցկացվող բողոքի ակցիային: Նա դեռ Հայաստանում չի եղել, բայց նախատեսում է շուտով գալ եղբոր հետ՝ կապված նոր նախագծի հետ, որի վրա աշխատում է: Նա ասել է, որ սեփական ընտանիքի պատմությունն իմանալը եւ այն աշխարհի հետ կիսվելը դարձնում է այն ամբողջական ու քաջալերում է բոլոր մարդկանց կիսվել իրենց նախնիների պատմությունով եւ չմոռանալ, թե որտեղից են նրանք եկել:

«Ես միշտ կհպարտանամ այն ամենով, ինչի միջով անցել է իմ մեծ տատիկը, որպեսզի կարողանամ այստեղ լինել: Ես սա միշտ ինձ հետ եմ տանելու եւ կարծում եմ, որ յուրաքանչյուր հայ պետք է հպարտանա իր նախնիներով ու նրանց արածով, որպեսզի մենք բոլորս այստեղ լինենք»:

«ՎՏԲ-Հայաստան» բանկ

## ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԸ ԲԱՐՁՐԱՑՎԵԼ ԵՆ

«ՎՏԲ-Հայաստան» բանկը բարձրացրել է ՀՀ դրամով «Պրոգրես» ավանդի տոկոսադրույքը 1 տոկոսային կետով:

Ավանդի առավելագույն տոկոսադրույքը կկազմի տարեկան 10%՝ միջոցները 12 ամսով ներդնելու դեպքում: Այսօր ավանդային այս առաջարկը երկրի բանկային շուկայում ամենաշահավետ տարբերակներից մեկն է:

«Պրոգրես» ավանդի շրջանակներում ՀՀ դրամով միջոցների ներդրումը հնարավոր է 1 ամսից մինչեւ 2 տարի ժամկետով: 12 ամիս ժամկետով ավանդ ներդնելիս առավելագույն եկամտաբերությունը կկազմի տարեկան 9,97%:

Ավանդի նվազագույն գումարը 30,000 ՀՀ դրամ է:

Ավանդի տոկոսագումարի հաշվարկման եղանակը հաճախորդն ինքն է ընտրում՝ ժամկետի վերջում կամ սկզբում կամ ամսական: Ավանդը նախատեսում է համալրման հնարավորություն: 181-րդ օրվանից ավանդի վաղաժամկետ մարման դեպքում տոկոսները մասնակի պահպանվում են. վերահաշվարկը կատարվում է սահմանված տոկոսադրույքից -2% տոկոսադրույքով: «Պրոգրես» ավանդը նախատեսում է նաեւ ավանդի գրավով վարկ ստանալու հնարավորություն՝ մինչեւ ավանդի գումարի 95%-ի չափով:

«Այս տարի, վերաֆինանսավորման բարձր տոկոսադրույքի ֆոնին, շարունակվում է բնակչության կողմից խնայողությունների տեսակարար կշռի ավելացման միտումը: Ներդրված միջոցների հիմնական ծավալը բաժին է ընկնում ազգային արժույթով ավանդներին, մինչդեռ հաճախորդներն ավելի հաճախ ընտրում են 6-ից 12 ամիս ժամկետով ավանդատեսակներ՝ առավելագույն եկամտաբերությամբ: Առաջին եռամսյակի արդյունքներով՝ վերջիններիս մասնաբաժինը կազմել է դրամային ավանդների ընդհանուր պորտֆելի 40%-ը: Մեր կանխատեսումներով այս միտումը կշարունակվի նաեւ երկրորդ կիսամյակում»,- նշում է «ՎՏԲ-Հայաստան» բանկի գլխավոր տնօրեն- տնօրինության նախագահի տեղակալ Տարաս Կլադչենկոն:

«ՎՏԲ-Հայաստան» բանկի հաճախորդներին ավանդների ձեւակերպումը հասանելի է հեռահար ուղիներով, «Վիդեո բանկինգ» ծառայության միջոցով եւ մասնաճյուղերում: Ավանդները հնարավոր է համալրել բանկի թվային ծառայությունների, TelCell եւ EasyPay վճարային տերմինալների միջոցով, ինչպես նաեւ Հայփոստի փոստային բաժանմունքներում:

Ֆիզիկական անձանց ավանդները երաշխավորված են Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից, սահմանաչափերը որոշվում են՝ կախված ներդրված միջոցների գումարից: Ավանդի տոկոսագումարից գանձվող եկամտահարկը կազմում է տարեկան 10%:

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

# ՔԵԶ ՄՈՏ ԱՎԵԼԻ ԼԱՎ Է ՍՏԱՑՎՈՒՄ...

**Ռուսաստանաբնակ երգչուհի Եվա Ռիվասը սոցիալական ցանցի իր էջում նոր հոլովակ է հրապարակել, որտեղ կատարում է Սոսո Պավլիաշվիլիի «В моем сердце весна» երգի «fаvr» տարբերակը:**




«10-ը բալային համակարգով գնահատեք «քավր»-ս: Մաղթում եմ, որ ձեր սրտերում էլ նույնքան տաք գարուն լինի, որքան հիմա մեզ մոտ է»,-գրել է երգչուհին:

Եվայի «քավր» կատարումը, իհարկե, գնահատել են հետեւորդներից շատերը, այդ թվում՝ նաեւ հենց ինքը՝ Սոսո Պավլիաշվիլին: «Անհավանական է: Եթե այսպես երգես, բոլոր դահլիճները քոնը կլինեն: Շնորհակալ եմ իմ արվեստի նկատմամբ այսպիսի վերաբերմունքի համար: Եթե ցանկություն ունենաս, կարող ես այն կատարել ցանկացած գործիքավորմամբ եւ ցանկացած լեզվով: Քեզ մոտ ավելի լավ է ստացվում, քան ինձ մոտ»,-գրել է հայտնի երգիչը: Երգչուհին արձագանքել է մեկնաբանությանը՝ նշելով, որ բաց չի թողնի նման հնարավորությունը:

● *Ապրիլի 28-ին Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը տեղի կունենա La Francophonie ներկայացումը: Տոմսերի արժեքը՝2000-3000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:*

# ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

**ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ ում եւ ինչ պայմաններում է տրամադրվում երկարամյա ծառայության կենսաթոշակը:**

*Մարիա Նալբանդյան (39 տարեկան)*

**ՊԱՏԱՍԽԱՆ.** Հայտնում ենք, որ երկարամյա ծառայության աշխատանքային կենսաթոշակ նշանակվում է՝

- քաղաքացիական ավիացիայի թռիչքահրամանատարական, թռիչքահրահանգչական եւ թռիչքային անձնակազմերի անդամներին, բորտօպերատորներին եւ բորտուղեկցորդներին, եթե լրացել է նրանց 45 տարին, եւ նրանք աշխատել են առնվազն 25 օրացուցային տարի, որից առնվազն 20 տարին երկարամյա ծառայության ստաժ է, իսկ առողջական վիճակի պատճառով թռիչքային աշխատանքներից ազատվելու դեպքում՝ եթե նրանք աշխատել են առնվազն 20 օրացուցային տարի, որից առնվազն 15 տարին երկարամյա ծառայության ստաժ է,
- օդային երթեւեկության կառավարման ծառայության կարգավարի (դիսպետչերի) վկայական ունեցող աշխատողին, եթե լրացել է նրա 50 տարին, եւ նա աշխատել է առնվազն 25 օրացուցային տարի, որից առնվազն 15 օրացուցային տարին անմիջականորեն կատարել է օդային երթեւեկության կառավարման աշխատանք, իսկ առողջական վիճակի պատճառով օդային երթեւեկության անմիջական կառավարման աշխատանքից ազատված անձին՝ եթե լրացել է նրա 50 տարին, եւ նա ծառայել է առնվազն 25 օրացուցային տարի, որից առնվազն 10 օրացուցային տարին անմիջականորեն կատարել է օդային երթեւեկության կառավարման աշխատանք:

*ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն*

**«ԺՈՂՈՎՈՒՐԴ».** Երկարամյա ծառայության աշխատանքային կենսաթոշակ նշանակվում է նաեւ ինժեներատեխնիկական ծառայության աշխատողին, եթե լրացել է նրա 55 տարին, եւ նա ունի առնվազն 25 օրացուցային տարվա աշխատանքային ստաժ, որից առնվազն 20 օրացուցային տարին կատարել է երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունք տվող աշխատանք:

*Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ*

## ԿԱՐԳ

**ՀԱՐՑ. Ուզում եմ իմանալ՝ քանի օրինակից է կնքվում ստորագրությունների իսկության ճանաչմամբ կնքվող պայմանագիրը:**

*Լարիսա Մուքոյան (32 տարեկան)*

**ՊԱՏԱՍԽԱՆ.** Տեղեկացնում ենք, որ ստորագրությունների իսկության ճանաչման նպատակով ներկայացվող պայմանագիրը ստորագրվում եւ ընդունվում է պետական գրանցման մեկ օրինակից, որը համարվում է այդ պայմանագրի բնօրինակը եւ պահպանվում է տվյալ անշարժ գույքի միավորի համար կազմված կադաստրային գործում:

Պայմանագրի կողմի դիմումի հիման վրա՝ նրան տրամադրվում է պետական գրանցման ընդունված պայմանագրի պատճենը՝ հաստատված Կադաստրի պետական կոմիտեի սպասարկման գրասենյակի կնիքով: Նման կարգով տրամադրված պատճենը եւ անշարժ գույքի ռեգիստրում պահպանվող պայմանագրի բնօրինակն ունեն հավասար իրավաբանական ուժ:

*Կադաստրի կոմիտե*

**«ԺՈՂՈՎՈՒՐԴ».** Հայաստանի Հանրապետության կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի սպասարկման գրասենյակներում անշարժ գույքի գործարքները կարող են կնքվել միայն ՀՀ կառավարության կողմից հաստատված օրինակելի պայմանագրերի հիման վրա: Եթե կողմերին անհրաժեշտ է ներառել լրացուցիչ պայմաններ, որոնք նախատեսված չեն օրինակելի պայմանագրերում, ապա նման դեպքում գործարքը կպահանջի նոտարական վավերացում:

## ԼՈՒՐ ԿԱԴՐ

*Լուսանկարն արվել է Եգիպտոսում*

Աշխարհի գավաթ. Հայաստանի թիմը Եգիպտոսում է (ֆոտո): Սպորտային մարմնամարզության Հայաստանի հավաքականը Եգիպտոսի մայրաքաղաք Կահիրեում է:

Առանձին գործիքների աշխարհի գավաթի խաղարկության չորրորդ փուլի մրցաշարում Հայաստանը կներկայացնեն Հարություն Մերդինյանը, Արթուր Դավթյանը, Արթուր Ավետիսյանը եւ Գագիկ Խաչիկյանը:

## ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

**«Հայմամուլ» ՓԲԸ**
հեռ. 45-82-00, 45-19-11

**«Հայփոստ» ՊՓԲԸ**
հեռ. 51-45-46, 51-45-47

**«Բլից-Մեդիա» ՍՊԸ**
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

## ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

| | |
|---|---|
| Շիրակ | + 2 + 6<br>+13 + 18 |
| Կոտայքի լեռներ | + 2 + 5<br>+14 + 16 |
| Կոտայքի նախալեռներ | + 7 + 9<br>+18 + 20 |
| Գեղարքունիք | + 1 + 6<br>+13 + 18 |
| Լոռի | + 2 + 7<br>+17 + 20 |
| Տավուշ | + 6 + 11<br>+20 + 24 |
| Արագածոտնի լեռներ | + 2 + 5<br>+12 + 14 |
| Արագածոտնի նախալեռներ | + 6 + 9<br>+18 + 22 |

| | |
|---|---|
| Արարատ | + 8 + 11<br>+21 + 24 |
| Արմավիր | + 7 + 9<br>+23 + 25 |
| Վայոց ձորի լեռներ | + 3 + 5<br>+15 + 17 |
| Վայոց ձորի նախալեռներ | + 8 + 10<br>+23 + 26 |
| Սյունիքի հովիտներ | +11 + 14<br>+25 + 30 |
| Սյունիքի նախալեռներ | + 8 + 10<br>+23 + 26 |
| Արցախ | +11 + 13<br>+24 + 29 |
| Երեւան | + 9 + 11<br>+21 + 23 |

## ԱՌԱՋԱՐԿ
## հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

**Բաժանորդագրության բլանկ**

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

*Հեռ.՝(060) 490049*
*0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.*

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝**010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **26.04.2023**
*Հասցեն՝ Գերաքրքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հովսեփյանի 2/21*

Գլխավոր խմբագիր՝
**ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*